ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարակերտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Դարակերտ, (0236) 6 13 01, (094)200766 darakert.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 09

ԴԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 31.01.2017Թ ԹԻՎ 03 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14 հոդվածի 6-րդ կետի պահանջով՝

ավագանին ո ր ո շ ու մ է

1.Հաստատել համայնքի ավագանու 30.01.2017թ թիվ 03 նիստի օրակարգը

1) Դարակերտ համայնքի 2017 թ-ի «Տեղական տուրքերի և վճարների» դրույքաչափերը սահմանելու և ավագանու 21.11.2016թ-ի « 2017 թ-ի Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N33-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին
2) Համայնքի 2017թ-ի բյուջեում փոփոխություն կատարելու մասին

3) Համայնքի ավագանու 21.11.2016թ.-ի <<Դարակերտ համայնքի «Հ.Միրզոյանի» անվան մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N32-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽՈՌԵՂԱՆՅԱՆ ՏԱՐՈՆ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՏԱԿ
5. ՍԻՄՈՆՅԱՆ ԳԱՐԻԿ
6. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարակերտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Դարակերտ, (0236) 6 13 01, (094)200766 darakert.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 10-Ն

ԴԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ 21.12.2016Թ N33-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 18 կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» 12 և 14 հոդվածների, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72 հոդվածի պահանջներով՝

ա վ ա գ ա ն ի ն ո ր ո շ ու մ է

1.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարակերտ համայնքում 2017 թ-ի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝

ա. Հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի այդ թվում այգեգործական / ամառանոցային / տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 15000 դրամ:

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000դր.
- 500-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 50000դր.
- 1000-ից մինչև 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000դրամ
- 3000-ից ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 100000 դրամ

գ. Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

-Մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 3000 դր

- 20 կամ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 դրամ

2) Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման

, **վերականգման**, ուժեղացման, արդիականացման նբարեկարգմանաշխատանքների / բացառությամբՀՀօրենսդրությամբսահմանվածշինարարությանթույլտվությունչպահանջվողդեպքերի/թույլտվության համար, եթեսահմանվածկարգովհաստատվածճարտարապետաշինարարականնախագծով՝ ա.չինախատեսվումկցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտայինչափերն ընդլայնողայլկառույցների / այդթվումստորգետնյա / հետևանքովօբյեկտիընդհանուրմակերեսիավելացումկամշենքերիգործառականնշանակությանփոփոխություն՝ 3000 դրամ

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափ այինային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն և բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափից կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանքւր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով, գ.նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն , ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ **օբյեկտների քանդման** /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի/ թույլտվության համար՝ 5000 դրամ:

4) Համայնքի վարչական տարածքում Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային **գազերի վաճառքի** թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝ **200 000** դրամ:

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում **տեխնիկական հեղուկների** վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60000 դրամ

6) **համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և կամ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար**

ա. **ոգելից և ալկոհոլային խմիչքի** վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

-**մինչև 26 քառակուսի մետր** ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000դր

- **26-ից մինչև 50 քմ** ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10200 դրամ,

-50-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14000 դրամ

բ. **ծխախոտի արտադրանքի վաճառքի** թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- **մինչև 26 քմ** ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝7000 դրամ

- **26-ից մինչև 50 քմ** ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10200 դրամ

- 50-ից **մինչև 100 քմ** ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների նրսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14000 դրամ,

7) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված **բացօթյա առևտրի** կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար **350 դրամ** մեկ քառակուսի մետրի համար:

8) համայնքի վարչական տարածքում առևտրի , հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին /սաունաներին/ **ժամը 24.00-ից** հետո աշխատելու թույլտվության համար օրացուցային տարվա համար՝

ա.Առևտրի օբյեկտների համար՝ **50 000** դրամ

բ. Հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 50 000 դրամ

9) Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան,, **հանրային սննդի** կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը **յուրաքանչյուր եռամսյակի** համար սահմանել՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

-մինչև 26 քմ մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ

- 26-ից **մինչև 50 քմ** ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **6000** դրամ

Բ **բ. ոչ հիմնական շինությունների ներսում**

- մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ:

10) ավազանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան Համայքնի վարչական տարածքում **արտաքին գովազդ** տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 2000 դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 3500 դրամ.

գ.սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ

դ.այլ արտաքին գովազդի համար 1500 դրամ

ե. Դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25% -ի չափով,

զ. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ի չափով,

11) ՀՀ համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն),որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100000 դրամ

12) Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացման և /կամ/ մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 500000 դրամ:

2. Սույն հոդվածով սահմանված դրույքաչափերը հաշվարկել **0,5 գործակցի կիրառմամբ:**

Տեղական վճարներ

1. Համայնքի տարածքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման

աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 դրամ

2) Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների / այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը/ կառուցման ավարտը **ավարտական ակտով** փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 դրամ

3) Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 5000 դրամ

4) Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող **հողերը հատկացնելու**, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում, փաստաթղթերի /փաթեթի/ նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 3000 դրամ
5) Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցմա վճար 3 000 դրամ:
6) Համայնքի կողմից **աղբահանությունը** կազմակերպելու համար՝
ա. աղբահանության վճարը 1 անձի համար սահմանել՝ 70 դրամ,
բ. իրավաբանական և ֆիզիկական անձանց պատկանող արտադրական և հասարակական տարածքների ընդհանուր մակերեսի մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ աղբահանության վճարը սահմանել՝ 5 դրամ,

7) համայնքային ենթակայության **մանկապարտեզի** ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ 4000 դրամ

8)համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 1000 դրամ

3. ՈՒԺը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 21.11.2016թ –ի «Դարակերտ համայնքի 2017թ –ի «Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 33-Ն որոշումը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽՈՂԵԴԱՆՅԱՆ ՏԱՐՈՆ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՏԱԿ
5. ՍԻՄՈՆՅԱՆ ԳԱՐԻԿ
6. ԿԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏԱԿ

Համայնքի ղեկավար ՂՈՒԿԱՍ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարակերտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Դարակերտ, (0236) 6 13 01, (094)200766 darakert.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 11

ԴԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 5-րդ կետի պահանջով՝

ավագանին ո ր ո շ ու մ է

Դարակերտ համայնքի 2017 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.
Վարչական բյուջեի եկամտային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.
ոգելից խմիչքների վաճառքի թույլտվություն պակասեցնել 104,4հդ
ծխոտի արտ.վաճառքի թույլտվություն պակասեցնել 76,4 հդ
հասարակական սննդի վաճառք պակասեցնել 12,0հդ
տեխնիկական հեղուկների վաճառք պակասեցնել 120,0 հդ
տաքսի ծառայություն պակասեցնել 5,0 հդ
գազի վաճառքի թույլտվություն պակասեցնել 100,0 հդ
բացօդյա վաճառքի թույլտվ. ավելացնել 153,0 հդ
Պահուստային ֆոնդ
11-1 2 4891 հոդվածից պակասեցնել 346,8 հդ
Նախադպրոցական կրթություն
9-1-1 4511 հոդվածին ավելացնել 82,0 հդ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽՈՌԵՂԱՆՅԱՆ ՏԱՐՈՆ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՏԱԿ
5. ՍԻՄՈՆՅԱՆ ԳԱՐԻԿ
6. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարակերտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Դարակերտ, (0236) 6 13 01, (094)200766 darakert.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 12-Ն

ԴԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 21.11.2016թ.-Ի ԹԻՎ 08 ՆԻՍՏԻ N32-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 28-րդ կետի պահանջով՝

ավագանին ո ր ո շ ու մ է

Համայնքի ավագանու 21.11.2016թ.-ի <<Դարակերտ համայնքի «Հ.Միրզոյանի» անվան մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N32-Ն որոշման թիվ 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

«դռնապան, բակապահ» 11-րդ տողում «79000» թիվը փոխարինել «80000» թվով

«խոհարարի օգնական» 12-րդ տողում «79000» թիվը փոխարինել «85000» թվով

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽՈՌԵՂԱՆՅԱՆ ՏԱՐՈՆ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՏԱԿ
5. ՍԻՄՈՆՅԱՆ ԳԱՐԻԿ
6. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀԱՄԱՅՆԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԻՄՈՆՅԱՆ